ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

22 նոյեմբերի 2016 թվականի N 178-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և հիմք ընդունելով <<*Հեպք*>> ինտերնետային կայքում 2016 թվականի նոյեմբերի 21-ին հրապարակված հոդվածը *(հեղինակ՝ լրագրող Սառա Պետրոսյան)* **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջովունիի համայնքապետարանում ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) ***Հարություն Ալեքսանյան*** - աշխատանքային խմբի ղեկավար - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,

2) ***Արմեն Վարդանյան*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

3) ***Գուրգեն Ավետիսյան*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ,

4) ***Կոմիտաս Հունանյան*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,

5) ***Ռոբերտ Թումոյան*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ *երկօրյա ժամկետում* ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ ներկայացնել համապատասխան տեղեկանք:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 22
ք. Հրազդան